ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Մարի Յովհաննիսեան, *Ուրացման Քաղաքականութեան Արմատները, Նորօրեայ Դրսեւորումները եւ Դրանց Հետեւանքները*, Երեւան, Էդիթ Պրինտ, 2017, 168 էջ:

Հայոց Ցեղասպանութեան ժխտման Թուրքիայի Հանրապետութեան պետական շարունակական քաղաքականութեան ծիրին մէջ կարեւորում է քաղաքագէտ, ցեղասպանագէտ Մարի Յովհաննիսեանի «Ուրացման Քաղաքականութեան Արմատները, Նորօրեայ Դրսեւորումները եւ Դրանց Հետեւանքները» խորագրով մենագրութիւնը, որը հեղինակի հերթական, արժանի ներդրումն է ցեղասպանագիտութեան:

Սկզբնաղբիւրային գիտական գրականութեան քննական վերլուծութեան լոյսի ներքոյ շարադրուած ուսումնասիրութիւնն առանձնանում է աշխարհաքաղաքական բարդ իրողութիւններում տարածաշրջանում խաղաղութեան հաստատման եւ պահպանման տեսանկիւնից:

Հեղինակի խորին համոզմամբ պատմութեան եւ իրականութեան հետ առերեսումն ու դրանից բխող հետեւանքների վերացումը կարող են օգնել վերանայելու անցեալը, ազգային անվտանգութեանն ու ապագայի կայունութեանը սպառնացող որոշումները: Հետազօտութեան «Նախաբան»ում Յովհաննիսեանը հիմնաւորում է անցեալում տեղի ունեցած բռնութիւնների, զանգուածային սպանութիւնների, ցեղասպանութիւնների ժխտման քաղաքականութեան ուսումնասիրութեան անհրաժեշտութիւնը: Նա համոզմունք է յայտնում, որ ճշմարտութեան բացայայտումից, արդարութեան վերականգնումից եւ անպատժելիութեան վերացմանն ուղղուած ջանքերից բացի, հարկ է կանխարգելել նմանօրինակ ոճիրների կրկնութիւնը՝ փաստելով, որ Հայոց Ցեղասպանութեան ժխտումն իր ձեւով ու կիրառելիութեամբ յաճախ է օրինակ ծառայել այլ ցեղասպանութիւնների ժխտողական քաղաքականութեան մշակման եւ իրականացման (էջ 6): Հեղինակը համարում է, որ մենագրութիւնը ոչ թէ անցեալի, այլ ապագայի մասին է, որ միայն անցեալը ճանաչելով է հնարաւոր ըմբռնել արդի խնդիրները եւ ուղիներ գտնել արդիւնաւէտ լուծման եւ ապագայում դրանց բացառման համար (էջ 6):

Առաջին գլխում՝ «Ժխտում (Մոռացում, Սահմանումներ, Շարժառիթներ եւ Հետեւանքներ», քննելով մարդկութեան պատմութեան անցեալը՝ Յովհաննիսեանը հաւաստում է, որ ինչպիսին էլ լինի այն՝ լաւ, թէ վատ, փառապանծ, թէ տխրահռչակ, մեծահամբաւ, թէ թշուառ, այն վերածելել հնարաւոր չէ, բայց հնարաւոր է եւ անհրաժեշտ՝ ճանաչել անցեալը եւ

կառուցել ապագան, անցեալը որպէս դաս մտքում պահելով (էջ 9): Նա յորդորում է մոռացութեան չտալ անցեալը, քանի որ այն կը նշանակի ժխտել ժամանակի շարունակականութեան փաստը՝ որակելով անհեթեթ եւ վտանգաւոր քայլ պատմական ժամանակի շարունակականութեան տեսանկիւնից. «*Եթէ մոռացութիւնը կամ ամնեզիան յիշողութեան խանգարման տեսակ է, որը կարող է ունենալ առաջացման տարատեսակ եւ որոշ դէպքերում գուցէ եւ օբեկտիւ պատճառներ, ապա ժխտումն ընտրութիւն է, որն ունի առաջացման մէկ պատճառ՝ կամք*» (էջ 11-12): Հեղինակի գնահատմամբ՝ ժխտել անցեալում իրագործուած ոճրագործութիւնները՝ նշանակում է ժխտել սեփական եւ այլոց պատմութիւնները, որը յղի է նոր հակամարտութիւնների առաջացման լուրջ սպառնալիքով (էջ 14-5):

Յովհաննիսեանն առաջ է քաշում նոր թեզ, համաձայն որի ցեղասպանութեան ժխտումն սկսւում է շատ աւելի վաղ, քան բուն յանցագործութիւնը: Հետաքրքիր է յատկապէս այս առնչութեամբ հեղինակի հետեւեալ մեկնաբանութիւնը. «*... Պնդումը, որ ցեղասպանութեան ժխտումն սկսւում է աւելի վաղ, քան բուն յանցագործութիւնը, առաջին հայեացքից կարող է պարադոքսալ եւ անտրամաբանական թուալ, քանի որ, համաձայն ընդունուած կարծիքի, կարող է ժխտուել միայն այն, ինչ արդէն իսկ գոյութիւն ունի: Բայց դէպքերի եւ իրադարձութիւնների աւելի խոր եւ մանրազնին վերլուծմամբ պարզ է դառնում, որ յանցագործութիւն կատարող անձինք կամ մի ողջ պետական ապարատ նախ եւ առաջ պարարտ հող են նախապատրաստում կատարուելիք գործողութիւնները ժխտելու համար. յօրինում եւ տարածում են այն միֆը, թէ այն, ինչ կատարուելու է, այն չէ, ինչ յետագայում կարող է տարատեսակ մեկնաբանութիւնների տեղիք տալ...*» (էջ 20):

Հետազօտողը, քննելով եւ համեմատելով ապամարդկայնացման եւ նախացեղասպանական ժխտման վտանգաւորութիւնները, նշում է, որ եթէ ապամարդկայնացման նպատակը զոհերին վատաբանելն է, տուեալ հասարակութեան այլ անդամներին ցեղասպանական գործողութիւնների ներքաշելը, մասնակից եւ յանցակից դարձնելը, ապա՝ նախացեղասպանական ժխտումն ուղղուած է թիրախաւորուած զոհերին ու միջազգային հանրութեանը եւ հետապնդում է գործողութիւններն անարգել աւարտին հասցնելու նպատակ (էջ 20):

Անդրադառնալով ժխտման շարժառիթներին՝ հեղինակն ընդգծում է, որ ինչպէս ցեղասպանութեան իրականացման, այնպէս էլ դրա ժխտման համար ահռելի մարդկային եւ դրամական միջոցներ են անհրաժեշտ եւ որ ժխտողական քաղաքականութիւն որդեգրած պետութիւններն ու դրանցում եռանդուն մասնակցութիւն ունեցող անձինք (պետական պաշտօնեաներ, հասարակական-քաղաքական գործիչներ, գիտնականներ, գործիչներ) լաւ

փաստագրուած ոճրագործութիւնները եւ բռնութիւնները ժխտելու համար ունեն իրենց շարժառիթները (էջ 22):

Հեղինակը, մտահոգուելով տարածաշրջանային խաղաղութեան պահպանման հարցով, մեկնաբանում է. «*Արդէն մէկ դար շարունակուող պայքարը՝ հայկական կողմի՝ Յեղասպանութեան ճանաչմանն ուղղուած եռանդուն ջանքերը, այն արտաքին քաղաքականութեան բաղկացուցիչ դարձնելու անդրդուելի որոշումը, ներազգային խնդիրների քննարկման մէջ մշտապէս Յեղասպանութեան յիշողութեան եւ նորանկախ Հայաստանի պայմաններում նաեւ պահանջատիրութեան հարցի բարձրաձայնումը, այս ամէնին զուգընթաց՝ թուրքական կողմի մոլեռանդ պայքարը՝ անցեալում տեղի ունեցած յանցագործութիւնների անխոտոր ժխտումը, թւում է, թէ անյաղթահարելի են դարձրել երկու ժողովուրդների միջեւ անջրպետի վերածուած թշնամանքի, հակակրանքի, կասկածանքի, անվստահելիութեան, որոշ չափով նաեւ վախի մթնոլորտը, որն անտարակոյս ձեւաւորել է քաղաքական եւ հասարակական մի միջավայր, որում ապագան անվտանգութեան առումով մշուշոտ է եւ անկանխատեսելի*» (էջ 19-23):

Հաշուի առնելով այն փաստը, որ Թուրքիայի եւ Հայաստանի հանրապետութիւնների միջեւ սահմանը փակ է 1994ից եւ այն բացելու, յարաբերութիւններ հաստատելու նախապայմաններից մէկը եղել եւ մնում է Հայոց Յեղասպանութեան հարցը, հեղինակը համոզմունքն է յայտնում, որ փակ սահմանը խոչընդոտում է Հայաստանի, Թուրքիայի արեւելեան շրջանների եւ ամբողջ տարածաշրջանի տնտեսական եւ ընկերային զարգացմանը, որն առաջ է բերում քաղաքական անկայունութիւն (էջ 23-4):

Հետազօտողը, իր ձեռք բերած հնարաւորինս ամբողջական տեղեկութեան ու կատարած վերլուծութեան հիման վրայ, ժխտողականութեան դէմ պայքարի եւ վերացման հարցում յանգում է հետեւեալ եզրակացութեանը. «*Եթէ հայոց համար Յեղասպանութեան յիշողութեան պահպանման, միջազգային ճանաչման, դատապարտման, փոխհատուցման հարցերը պարզ են եւ ընկալելի, ապա թուրքական իշխանութիւնների եւ թուրք հասարակութեան կողմից իրականացուող ժխտողական քաղաքականութիւնն ունի բազմաշերտ, տարաբնոյթ, ակներեւ ու թաքնուած շարժառիթներ: Թուրքական ժխտողական քաղաքականութեան դրդապատճառներից մէկն այն է, որ բռնութիւնը թուրքական իրականութեան մէջ դարերի ընթացքում դարձել է գոյութեան երաշխիք, իսկ դրա ժխտումը, ներթափանցելով մշակոյթի մէջ, վերածուել է ինքնութեան մի մասի եւ գոյութեան պահպանման առհաւատչեայի: Այլոց նկատմամբ բռնութեան կիրառմամբ կայսրութիւն ստեղծելը, այդ բռնութիւններին մասնակցած անձանց հերոսացնելը ստեղծել են ինքնախաբէութեամբ սնուած... կեղծիքով համակուած մի մթնոլորտ, որի քօղազերծումը ... կը քանդի այն գաղափարական հիմքերը, որի վրայ*

կառուցուել են ազգային ինքնութիւն, ազգային անվտանգութիւն, ապագայի վերաբերեալ ազգային տեսլական հասկացութիւնները... կը փլուզեն երկիրը թէ՛ ներսից, թէ՛ դրսից» (էջ 27):

Արժեւորելով ժխտման հետեւանքների ուսումնասիրումն ու վերհանումը՝ հետազօտողը փաստում է, որ անկախ ցեղասպանութեան ժխտման շարժառիթներից, այն առաջացնում է որոշ ընդարմածութիւն՝ իրականութեան լրջութեան ընկալման խանգարում, իսկ քաղաքական եւ հանրային մակարդակում՝ անցեալն անտեսելու եւ մոռացութեան մատնելու պատեհապաշտական յարմարաւէտութեամբ պայմանաւորուած, առաջ է գալիս իրողութեան ամբողջական ըմբռնման մթագնում, որի գիտակցումը թերեւս տեղի է ունենում կատարուած փաստին առերեսուելուց յետոյ միայն (էջ 32):

Ամփոփելով ուսումնասիրութեան առաջին գլխի արդիւնքները եւ կարեւորելով վերապրողների ու նրանց ժառանգների վրայ հոգեբանական ազդեցութիւնը՝ հեղինակը յանգում է այն եզրակացութեանը, որ Ցեղասպանութիւնը վերապրած ժողովուրդը երբեմն գիտակցուած, իսկ աւելի յաճախ անգիտակցաբար կրում է անցեալի արհաւիրքների՝ ծինականօրէն փոխանցուած յիշողութիւնը (էջ 41): Յովհաննիսեանը հեռատեսօրէն նկատում է, որ եթէ չկայ կատարուած յանցանքի զղջում, ցաւն աւելի է սաստկանում՝ յաճախ վերածուելով անբացատրելի վախի կամ թշնամանքի՝ ցեղասպանութիւն գործած եւ մեղքը ուրացող մարդասպանների եւ նրանց յետնորդների նկատմամբ (էջ 41):

Հետազօտութեան Բ. գլխում՝ «Թուրքական Ժխտողական Քաղաքականութեան Ակունքները», անդրադառնալով թուրքական իշխանութիւնների առջեւ ծառացած «մարտահրաւէրներին», որոնք փոխուելու են՝ ըստ երկրի ներսում տեղի ունեցող իրադարձութիւնների, աշխարհաքաղաքական իրողութիւնների եւ կառավարութիւնների որդեգրած քաղաքականութիւնների, հեղինակը նկատում է, որ ներկայում կամ անցեալում տեղի ունեցած իրադարձութիւնների ժխտումը մշտապէս եղել եւ մնում է թուրքական քաղաքականութեան յենասիւներից մէկը (էջ 41):

Յովհաննիսեանն այն կարծիքն է յայտնում, որ թէեւ ժամանակին զուգընթաց փոխուել են ժխտողական քաղաքականութեան կիրառման մեթոդներն ու մեքենայութիւնները, սակայն հիմնական թեզերը, որպէս այդպիսիք, կտրուկ փոփոխութիւնների չեն ենթարկուել, աւելացել են նորերը, հները վերասահմանուել կամ երանգաւորուել են, բայց դրանց բուն էութիւնը պահպանուել է (էջ 45):

Հեղինակի համոզմամբ ժխտողական քաղաքականութիւնը սկիզբ է առել դեռեւս Աբդուլ Համիդի Բ.ի կառավարման շրջանից (1876-1909) եւ որ բռնութեան մեթոդները, ոճրագործութիւնների համակարգուած ու բծախնդրօրէն մշակուած բնոյթը եւ առանձնակի դաժանութիւնները չեն

տարբերուել աւելի ուշ իրագործուած եւ իրաւական եզրոյթով Ցեղասպանութիւն որակուած դէպքերից (էջ 47):

Ուսումնասիրողը փաստում է, որ թուրքական ժխտողականութեան այն թեզը, թէ հայերը բռնութեան չեն ենթարկուել, այլ տեղի ունեցած զանգուածային սպանութիւնները եղել են ոչ թէ քաղաքական վերնախաւի կողմից նախապէս մշակուած եւ իրագործուած յանցագործութիւններ, այլ ազգամիջեան, էթնիկ բախումներ, որոնց պատասխանատուութիւնն ընկնում է դրանցում ներգրաւուած էթնիկ խմբերի վրայ, աւելին՝ նրանց անհանդուրժողութիւնը վտանգել է նաեւ պետութեան անվտանգութիւնն ու ներքին կայունութիւնը, սկզբնաւորուել է հենց վերը յիշատակուած ժամանակահատուածում:

Յովհաննիսեանն առանձնացրել է նաեւ Օսմանեան Կայսրութեան ներսում տեղի ունեցող բռնութիւնների մասին օտարների՝ իրականութիւնը խեղաթիւրուած ներկայացնելու փաստեր, որոնք վերաբերում են տեղի ունեցածը ժխտելուն, յանցանքն ուրանալուն: Աւելին, հեղինակը ժխտման մի օրինակ է բացայայտել 2011ի Իտալիայի արտաքին գործերի նախարարութիւնից Հայաստանի Ազգային Արխիւին (ՀԱԱ) փոխանցուած օտարալեզու փաստաթղթերի փաթեթն ընթերցելիս:

ՀԱԱում պահուող գրութիւնների այդ փաթեթում Մեծն Բրիտանիայի արտաքին գործերի նախարարին ուղղուած թիւ 114 նամակի բովանդակութիւնից պարզ է դառնում, որ չնայած հայերի կոտորածների մասին հսկայածաւալ տեղեկութեանը՝ Բարձր Դուռը ժխտում է թէ հայկական բնակավայրերում տեղի են ունեցել հայերի զանգուածային կոտորածներ: Աւելին՝ համաձայն որդեգրած քաղաքականութեանը, զոհերին ներկայացրել են որպէս յանցագործներ եւ մեղադրել յարձակումներ նախապատրաստելու եւ իրականացնելու մէջ (էջ 51-2):

Հեղինակը, որպէս ժխտողական քաղաքականութեան «խորամանկ ձեւ» առանձնացնում է հաղորդուած բռնութիւնների վերաբերեալ հետաքննութիւն իրականացնելն ու մեղաւորներին փնտռելը, իսկ իր բնորոշմամբ առաջին հայեացքից անմեղ ու արդար թուացող այդ նախաձեռնութիւնը որակել է որպէս խորքային եւ ապակողմնորոշող քայլ: Հեղինակի ներկայացրած փաստաթուղթն այդպիսի մի նախաձեռնութեան բացայայտում է, որտեղ նշում է, որ տէրութիւններին առաջարկուող յանձնաժողովը պէտք է յետաքննի ոչ թէ հայերի դէմ իրագործուած բռնութիւնները, այլ հայերից կազմուած աւազակախմբերի գործողութիւնները (էջ 52-3):

Ուսումնասիրութեան վերջին Գ. գլխում՝ «Ձեւափոխութիւններ Ժխտողական Քաղաքականութեան Մէջ», Յովհաննիսեանն անդրադառնում է ցեղասպանութեան ժխտման քաղաքականութեան դրսեւորումներին: Այսպէս, թուրքական ժխտման յայտնի թեզերից մէկի համաձայն մարդկային կորուստները պայմանաւորուած են պատերազմական իրավիճակով եւ դրա հետեւանքով ստեղծուած

պայմաններով, որոնց համար իշխանութիւնները չեն կարող պատասխանատուութիւն կրել, քանզի նպատակը եղել է բարի, մարդիկ տեղահանուել են իրենց իսկ անվտանգութեան նկատառումներով (էջ 87):

Հեղինակը փաստում է, որ Հայոց Ցեղասպանութեան ընթացքում հայերի դէմ իրականացուող ոճրագործութիւնները ժխտում էին ոչ միայն թուրքերն ու նրանց՝ այլ երկրներում հաւատարմագրուած դեսպաններն ու հիւպատոսները, այլեւ իրենց դաշնակից գերմանացիները (էջ 92):

Թուրքիայի վարած արտաքին քաղաքականութեան մէջ - համաձայն Յովհաննիսեանի - մշտապէս առկայ են դիւանագիտական յարաբերութիւնների խզման, իրենց դեսպաններին ետ կանչելով, տնտեսական պայմանաւորուածութիւնների չեղարկման միջոցով Հայոց Ցեղասպանութեան պաշտօնական ճանաչումը կանխելու, վերջին շրջանում՝ նաեւ դրա ժխտումը քրէականացնելու փորձերը: Ուսումնասիրողի համար կասկածից վեր է տասնամեակների ընթացքում Թուրքիայի քաղաքական ուղեգծի անփոփոխ մնալու փաստը: Նա համոզուած նշում է, որ ամէն ինչ գրեթէ նոյնն է, փոխուել են միայն դերակատարներն ու մատուցման ձեւերը (էջ 97-8):

Հեղինակը փաստում է, որ Հայոց Ցեղասպանութեան ժխտումն այնքան արմատական եւ մոլեռանդ դրսեւորումներ է ունեցել, որ նախքան մեծաթիւ գիտական հետազօտութիւնների լոյս ընծայումը (եւ հանրայնացումը) շատ քչերին էր յայտնի, որ Թուրքիան իրականում եղել է առաջին պետութիւնը, որը ճանաչել է հայերի դէմ իրագործուած յանցագործութիւնը եւ վկայակոչում 1919-21ի եւ 1926ի դատավարութիւնները: Յովհաննիսեանը ցաւով է նկատում, որ ինչպէս ցանկացած փաստ եւ ապացոյց, այս դատավարութիւնների օրինականութիւնը եւս կասկածի տակ է դրուել (էջ 102-3):

Որպէս Հայոց Ցեղասպանութեան ժխտման ցաւալի եւ խիստ վտանգաւոր նոր մեթոդ՝ հետազօտողն առանձնացնում է 1965ից ի յայտ եկած թուրքական ժխտողական քաղաքականութիւն ներթափանցած եւ խոր արմատներ թողած Հայոց Ցեղասպանութեան ժխտումը գիտական շրջանակներում: Ցեղասպանութիւնների ժխտման թեզերը, մեթոդները եւ շարժառիթներն ուսումնասիրելիս Յովհաննիսեանը խիստ անհրաժեշտ է համարում պատմութեան եւ իրականութեան խեղաթիւրման ու կեղծումին մէջ ներգրաւուած գիտնականներին եւ նրանց գործունէութեանն անդրադառնալը: 1970ականներից ցեղասպանութիւնների ժխտման ներթափանցումը նաեւ գիտական շրջանակներից ներս հեղինակը մեծապէս պայմանաւորում է հենց այդ շրջանում սկզբնաւորուած առանձին գիտական ճիւղով՝ ցեղասպանագիտութեամբ (էջ 107):

Հետաքրքիր է Յովհաննիսեանի հետեւեալ արձագանգը. «*Իրականում ցեղասպանութիւնների ուսումնասիրութեանը նուիրուած առաջին գիտաժողովի կազմակերպումը խոչընդոտելու, Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ զեկուցումների չեղարկելունն ուղղուած լայնածաւալ*

աշխատանքները, Թուրքիայի բուռն արձագանգն ու հնչեցրած սպառնալիքները, Իսրայէլի ներգրաւուածութիւնը թուրքական ժխտողական քաղաքականութեան մէջ վկայում են... գիտական կեղծարարութեան մասին, որ պիտի ստուերէր գիտութեան՝ անաչառ ու արդար լինելու, իրականութիւնը ներկայացնելու առաքինութիւնը» (էջ 111):

Հեղինակը նշում է, որ Թուրքիայի կառավարութիւնը Հայոց Ցեղասպանութեան ուրացման քաղաքականութեան տարածման մէկ այլ՝ աւելի վտանգաւոր ու քօղարկուած մեթոդ մշակեց եւ կեանքի կոչեց, համաձայն որի «*Թուրքիայի պատմութեան ուսումնասիրման եւ թուրքագիտութեան զարգացման*» անուան ներքոյ սկսեցին ֆինանսաւորել արտասահմանեան, մասնաւորապէս ամերիկեան բուհերում գիտական, հետազօտական աշխատանքներ իրականացնող ուսանողներին եւ գիտնականներին (էջ 124):

«Ընդհանուր ցաւ», «արդար յիշողութիւն», «երկկողմանի կորուստներ» արտայայտութիւնները Յովհաննիսեանի հաւաստմամբ ոչ միայն շատ հեռու են հաշտեցման հնարաւոր գործընթացի համար առաջին քայլ դառնալու հաւանականութիւնից, այլեւ լրջօրէն սպառնում են խորացնել երկու ժողովուրդների միջեւ գոյութիւն ունեցող անվստահութիւնն ու թշնամական վերաբերմունքը: Հաւասարութեան նշան դնելով զոհի եւ յանցագործի միջեւ՝ պատմութիւնը կարելի է վերածել քաոսի, գլխիվայր շրջել արդարութիւնը, սին ու անիրական դարձնել իրաւական ու քաղաքակիրթ, բռնութիւններից ու ահաբեկչութիւններից զերծ միջավայր ստեղծելու բոլոր բարձրագոչ յայտարարութիւնները, որոնք դուրս են զուտ ազգային կամ տարածաշրջանային խնդիրներ լինելու նեղ շրջանակից (էջ 142): Հետազօտողը կարեւորում է նաեւ այն, որ թուրքական պատմագրութիւնը եռանդուն կերպով ժխտում է Առաջին Աշխարհամարտի ժամանակ զոհուած հայերի իրական թիւը, որն ըստ թուրքական պատմագիտական մտքի «հայ ազգայնամոլները» միտումնաւոր կերպով ուռճացրել են (էջ 146):

Անդրադառնալով ցեղասպանութեան ժխտմանը՝ ֆիլմարուեստում, հեղինակը նկատում է, որ Թուրքիայի Հանրապետութեան ժխտողական քաղաքականութիւնն ազդել է ոչ միայն գիտական համաժողովների, քաղաքական որոշումների կայացման, այլ նաեւ մշակութային ոլորտի վրայ, որը սկիզբ է առել դեռեւս 1920ականներից (էջ 160): Գիտակցելով արուեստի ուժն ու հոգեբանական ազդեցութիւնը հասարակութեան վրայ՝ թուրքական քաղաքական վերնախաւը դադարեցրել է Հայոց Ցեղասպանութեան մասին պատմող առաջին գեղարուեստական՝ *Հոգիների Աճուրդը* ֆիլմի ցուցադրութիւնը (էջ 160-1): Այսօրինակ նախաձեռնութեան «յաջող փորձից» յետոյ փոխւում է ժխտողական քաղաքականութեան ծաւալման ռազմավարութիւնը, իսկ 2000ականներից թուրքական ժխտողական քարոզչամեքենան սկսում է արտադրել

պատմական դէպքերի վերաբերեալ իր պաշտօնական տեսակէտն արտացոլող ֆիլմեր (էջ 161):

Յովհաննիսեանն այս առնչութեամբ մտահոգութիւն է յայտնում, թէ պատմութիւնից անտեղեակ օտարազգի քաղաքացին կարող է նոյնիսկ չկասկածել, որ արտադրութեան համար ֆինանսական լուրջ միջոցներ պահանջող ֆիլմում օտարազգի պատմաբանի շուրթերից հնչող յայտարարութիւնները կարող են լինել պատմութեան խեղաթիւրման մշակութային դրսեւորումներ եւ առաջարկում այսօրինակ քաղաքականութեան դէմ ժխտողական քարոզչութիւն, պատմական ապատեղեկատուութիւն պարունակող ֆիլմերի նկարահանման եւ ցուցադրման միջազգային գրաքննութիւն (էջ 163-4):

Այսպիսով, Մարի Յովհաննիսեանի մենագրութիւնը Հայոց Ցեղասպանութեան թուրքական ժխտողականութեան պատճառների եւ դրանց հետեւանքների լուսաբանման, քաղաքական, ընկերային, հոգեբանական, մշակութային դրսեւորումների վերաբերեալ համակարգուած ուսումնասիրութիւն է:

Տեսական հիմնախնդիրների համակողմանի վերլուծութիւնը, հեղինակի առաջադրած «արդիւնաւէտ գործիքների» ու կառուցողական մօտեցումների ամբողջականութիւնը կարող են մեծապէս նպաստել թուրքական ժխտողականութեան քաղաքականութիւնն ըմբռնելուն եւ «ժխտողականութեան վերընթաց շարժումը» կանխարգելելուն:

Թեհմինէ Ռ. Մարտոյեան
tehminemartoyan@gmail.com